


Հաստատվել է Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի հիմնադրամի Գիտական խորհրդի 2021 թ. հոկտեմբերի 19-ի նիստում Արձանագրություն No.01-10/21 Գիտական խորհրդի նախագահ,  
Ռեկտոր  Գ.Վ.Վարդանյան



## ԿԱՐԳ

### ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ

#### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը մշակված է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածին, ՀՀ Կառավարության 03.10.2001թ. «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում գիտական կադրերի որակավորման կարգը և գնահատման չափանիշները հաստատելու մասին» No 935 որոշմանը և Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային Համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) գիտական խորհրդի կողմից հաստատված No 01-07/20 բազային ֆինանսավորմամբ գործող «Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» լաբորատորիաներում ընդգրկված գիտաշխատողների գիտական գործունեության արդյունավետության գնահատման մեթոդաբանությանը համապատասխան:

2. Սույն կարգով սահմանվում են Համալսարանի գիտական կադրերի որակավորման գնահատման չափանիշները, գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշները և գիտական աշխատողների ատեստավորման ընթացակարգերը:

3. Սույն կարգի նպատակն է որոշել Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի (այսուհետ՝ ՃՀՀԱՀ) գիտական աշխատողների մասնագիտական պատրաստվածության աստիճանը և գիտական աշխատողների մասնագիտական որակի համապատասխանությունը նրանց զբաղեցրած պաշտոններին, առաջնորդվելով նրանց գիտական և գիտատեխնիկական գործունեության օբյեկտիվ գնահատմամբ՝ համաձայն տվյալ պաշտոնը բնորոշող չափորոշիչների:

4. Գիտական աշխատողների ատեստավորումն անցկացվում է առնվազն 5 տարին մեկ անգամ՝ սույն կարգի երկրորդ բաժնում սահմանված՝ գիտական կադրերի գնահատման չափանիշների և գիտական պաշտոնների տարակարգերի պահանջներին համապատասխան:

**II. ԳԻՏԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՏԱՐԱԿԱՐԳԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

5. Գիտական պաշտոնները բնորոշող չափանիշներն են՝

ա) պաշտոնի հավակնորդի գիտական աստիճանը,

բ) գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշները (այսուհետ՝ ԳԳԱՑ),

գ) մասնագիտական հմտությունները (նորմատիվային փաստաթղթեր և նախագծեր):

Մասնագիտության հմտությունների գումարային առավելագույն միավորը չի կարող գերազանցել գիտական գործունեության արդյունքների (հավելվածի 1, 2, 3 և 4 կետեր) գումարային միավորի 50 տոկոսը:

6. Համալսարանում սահմանվում են գիտական կադրերի հետևյալ տարակարգերը.

ա) գլխավոր գիտական աշխատող,

բ) առաջատար գիտական աշխատող,

գ) ավագ գիտական աշխատող,

դ) գիտական աշխատող,

ե) կրտսեր գիտական աշխատող

**7. Գլխավոր գիտական աշխատողի պաշտոն կարող են զբաղեցնել.**

1) Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի իսկական և թղթակից անդամները.

2) գիտությունների դոկտորի գիտական աստիճան և (կամ) պրոֆեսորի գիտական կոչում ունեցող գիտնականները, որոնք ղեկավարում են գիտական ուղղություն և (կամ) ստեղծել են գիտական դպրոց և ունեն առնվազն 15 տարվա գիտական աշխատանքի ստաժ:

8. Գլխավոր գիտական աշխատողը պետք է՝

1) ղեկավարի (կամ մասնակցի) կարևորագույն նշանակություն ունեցող գիտական հետազոտություններ (մշակումներ, նախագծեր), այդ թվում՝ գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրեր, առաջադրի հետազոտությունների (մշակումներ, նախագծեր) նոր ուղղություններ, որոշի դրանց իրականացման ուղիներն ու միջոցները,

2) ընդհանրացնի հետազոտությունների (մշակումներ, նախագծեր) արդյունքները, որոշի դրանց օգտագործման ոլորտները,

3) համակարգի այլ կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող գիտական և գիտատեխնիկական աշխատանքները,

4) իրականացնի գիտական կադրերի պատրաստման և վերաորակավորման աշխատանքները,

5) ունենա 20 միավորից բարձր ԳԳԱՑ որակավորումն անցկացնելու տարվան նախորդող 5 տարի ժամանակահատվածում:

**9. Առաջատար գիտական աշխատողի պաշտոն կարող են զբաղեցնել.**

1) գիտությունների դոկտորի գիտական աստիճան և (կամ) պրոֆեսորի գիտական կոչում ունեցող գիտնականները.

2) գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող գիտնականները, որոնք ունեն առնվազն 10 տարվա գիտական աշխատանքի ստաժ, տվյալ մասնագիտությամբ արժեքավոր գիտական աշխատանքներ, կարևոր նախագծեր և մշակումներ:

10. Առաջատար գիտական աշխատողը պետք է՝

1) մասնակցի առանձին թեմաների և առաջադրանքների շրջանակներում կատարվող հետազոտություններին (մշակումներ, նախագծեր),

2) ղեկավարի այդ հետազոտությունները (մշակումներ, նախագծեր) կատարող աշխատանքային խումբ կամ այլ գիտական կառուցվածքային ստորաբաժանում,

3) հիմնավորի նոր հետազոտությունների (մշակումներ, նախագծեր) ուղղությունները և դրանց իրականացման եղանակները, մշակի աշխատանքային ծրագրեր,

4) ընդհանրացնի հետազոտությունների արդյունքները, որոշի դրանց օգտագործման ոլորտները,

5) մասնակցի գիտական կադրերի պատրաստմանը և դրանց որակավորման բարձրացմանը:

6) ունենա 15 միավորից բարձր ԳԳԱՅ որակավորումն անցկացնելու տարվան նախորդող 5 տարի ժամանակահատվածում:

**11. Ավագ գիտական աշխատողի պաշտոն կարող են զբաղեցնել.**

1) գիտությունների դոկտորի գիտական աստիճան և (կամ) պրոֆեսորի գիտական կոչում ունեցող գիտնականները.

2) գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և առնվազն 10 տարվա գիտական աշխատանքի ստաժ ունեցող գիտնականները:

12. Ավագ գիտական աշխատողը պետք է՝

1) մասնակցի գիտական թեմայի շրջանակներում կատարվող հետազոտություններին (մշակումներ, նախագծեր) և աշխատանքային խմբի կամ առանձին հետազոտությունների գիտական ղեկավարմանը,

2) կազմակերպի գիտական թեմայի շրջանակներում գիտական ու գիտատեխնիկական տեղեկատվության մշակման և վերլուծության աշխատանքները,

3) իրականացնի հետազոտությունների (մշակումներ, նախագծեր) արդյունքների վերլուծության և ընդհանրացման աշխատանքներ,

4) ունենա 5 միավորից բարձր ԳԳԱՅ որակավորումն անցկացնելու տարվան նախորդող 5 տարի ժամանակահատվածում:

**13. Գիտական աշխատողի պաշտոն կարող են զբաղեցնել.**

1) գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող գիտնականները.

2) մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում և առնվազն 5 տարվա գիտական աշխատանքի ստաժ ունեցող գիտնականները, ովքեր գիտական աշխատանքների կամ գյուտերի հեղինակներ են:

14. Գիտական աշխատողը, որպես պատասխանատու կատարող, պետք է մասնակցի գիտական թեմայի շրջանակներում կատարվող հետազոտություններին (մշակումներ, նախագծեր), գիտական և գիտատեխնիկական տեղեկատվության ու հետազոտության արդյունքների մշակման, վերլուծության և ընդհանրացման աշխատանքներին, ինչպես նաև ունենա 3 միավորից բարձր ԳԳԱՅ որակավորումն անցկացնելու տարվան նախորդող 5 տարի ժամանակահատվածում:

**15. Կրտսեր գիտական աշխատողի պաշտոն կարող են զբաղեցնել.**

1) գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող գիտնականները.

1) մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող մասնագետները:

16. Կրտսեր գիտական աշխատողը պետք է՝

1) մասնակցի գիտական թեմայի առանձին մասերի շրջանակներում կատարվող հետազոտություններին (մշակումներ, նախագծեր)՝ պատասխանատու կատարողի ղեկավարությամբ,

2) կատարի տվյալ թեմայով գիտական և գիտատեխնիկական տեղեկատվության ուսումնասիրություն:

**III. ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄԸ**

17. Ատեստավորման անցկացման ժամանակացույցը սահմանվում է ՃՇՀԱՀ ռեկտորի հրամանով, որի մասին որակավորման ենթակա անձինք տեղեկացվում են ատեստավորման գործընթացի սկսելուց առնվազն մեկ ամիս առաջ:

18. Գիտական աշխատողների ատեստավորման նպատակով Համալսարանի ռեկտորի հրամանով կազմավորվում է 8 անդամից բաղկացած որակավորող հանձնաժողով՝ ներառյալ հանձնաժողովի նախագահը և քարտուղարը: Հանձնաժողովի քարտուղարն ունի գործավարական լիազորություններ և չի մասնակցում քվեարկություններին:

19. Ատեստավորման ենթակա չեն՝

1) Համալսարանի ռեկտորն ու գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրերի ղեկավարները (լաբորատորիաների ղեկավարները), որոնց ընտրության և (կամ) նշանակման կարգը սահմանված է Համալսարանի կանոնադրությամբ, ինչպես նաև՝

2) զբաղեցրած պաշտոնում երկու տարուց ոչ ավել աշխատող անձինք,

3) հղիության կամ երեխայի խնամքի արձակուրդում գտնվող կանայք, որոնց ատեստավորումն իրականացվում է ոչ շուտ, քան արձակուրդից երկու տարի անց,

20. Գիտական աշխատողի թափուր պաշտոնն առաջանալիս համալսարանի գիտական աշխատանքների գծով պրոռեկտորի առաջարկությամբ թափուր գիտական պաշտոնում կարող է նշանակվել առանց մրցույթային ընտրության՝ ռեկտորի հրամանով, մինչև 1 տարի ժամկետով (մինչև առաջիկա ընդհանուր ատեստավորումը):

21. Ատեստավորումից առնվազն մեկ ամիս առաջ որակավորող հանձնաժողովը կազմում է ատեստավորման ցուցակները՝ ընդգրկելով այն գիտական աշխատողներին, որոնք ատեստավորման գործընթացը սկսելու օրվա դրությամբ զբաղեցնում են սույն կարգի 2 - րդ բաժնում սահմանված գիտական պաշտոններ:

22. Ատեստավորումից առնվազն 15 օր առաջ՝

1) գիտաշխատողը հանձնաժողովին է ներկայացնում՝

ա) անմիջական ղեկավարի կարծիքը գիտաշխատողի մասին (Ձև N<sup>o</sup> 1),

բ) տեղեկատվություն նախորդ ատեստավորումից հետո անցած ժամանակահատվածում գիտական և գիտամանկավարժական գործունեության մասին (Ձև N° 2),

2) Համալսարանի գիտական քաղաքականության վարչությունը հանձնաժողովին է ներկայացնում որակավորման նախորդ հանձնաժողովի արձանագրությունը գիտաշխատողի ատեստավորման նախկին արդյունքի վերաբերյալ:

23. Հանձնաժողովը կազմում է ատեստավորման օրացուցային պլանը, համաձայնեցնելով այն ռեկտորի հետ, որից հետո ատեստավորման ենթակա գիտաշխատողներին տեղեկացվում է իրենց ատեստավորման օրը, ժամը և տեղը:

24. Մինչև ատեստավորման օրը գիտական քաղաքականության վարչությունը հանձնաժողովին է ներկայացնում ատեստավորման ենթակա յուրաքանչյուր գիտաշխատողի ատեստավորման թերթիկը (Ձև N° 3), որտեղ տրվում է գիտաշխատողի գործունեության գնահատականը հետևյալ բաղադրիչներով՝

1) համապատասխանությունը տարակարգով սահմանված պահանջներին,

2) գործունեության արդյունավետության գնահատման ամփոփ միավորը:

25. Հանձնաժողովն իրավասու է անցկացնելու ատեստավորումը, եթե նիստին մասնակցում է հանձնաժողովի անդամների առնվազն 2/3-ը:

26. Հանձնաժողովի նիստը վարում է նախագահը, նրա բացակայության դեպքում անդամներից մեկը՝ նախագահի հանձնարարությամբ:

27. Հանձնաժողովի նիստին ատեստավորվող գիտաշխատողից բացի հրավիրվում է նաև նրա անմիջական ղեկավարը:

28. Ատեստավորվող գիտական աշխատողի՝ առանց հարգելի պատճառի հանձնաժողովի նիստին չներկայանալու դեպքում հանձնաժողովը կարող է որակավորումն անցկացնել նրա բացակայությամբ:

29. Հանձնաժողովն ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը սույն կարգով սահմանված պահանջներին և սահմանված տարակարգմանը:

30. Ատեստավորվողների գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշը որոշվում է սույն կարգի հավելվածով սահմանված մեթոդաբանությանը համապատասխան:

31. Նիստի սկզբում գիտաշխատողները ծանոթանում են իրենց ատեստավորման թերթիկներին՝ համապատասխան գնահատականներով: Ատեստավորվող անձանց կողմից գնահատականների առնչությամբ պարզաբանումներ ստանալու պահանջի դեպքում դրանք ներկայացնում է հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ հանձնաժողովի որևէ անդամ:

32. Նիստի օրակարգում ընդգրկված ատեստավորման թերթիկների ամրագրված արդյունքների հիման վրա հանձնաժողովը կազմում է արձանագրություն (Ձև N° 4) գիտաշխատողների որակավորման վերաբերյալ:

33. Որոշումն ընդունվում է փակ գաղտնի քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում որոշումն ընդունվում է ատեստավորվողի օգտին:

34. Շահերի բախումից խուսափելու համար հանձնաժողովի անդամ հանդիսացող աշխատողը և նրա գիտական ղեկավարը չեն մասնակցում տվյալ աշխատողի ատեստավորման քվեարկությանը:

35. Հանձնաժողովի կազմած արձանագրությունը, գիտաշխատողների համապատասխան պաշտոնների համալրման վերաբերյալ, ներկայացվում է գիտատեխնիկական խորհրդի հաստատմանը:

36. Գիտատեխնիկական խորհուրդը 5-օրյա ժամկետում կայացնում է որոշում ատեստավորման արդյունքները հաստատելու վերաբերյալ և այն ներկայացնում է ռեկտորին:

37. Ռեկտորն իրավասու է չեղյալ համարել գիտատեխնիկական խորհրդի +որոշումը, եթե բացահայտվել են սույն կանոնակարգի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են ընտրության վերջնական արդյունքների վրա:

38. Ատեստավորման արդյունքները և գիտատեխնիկական խորհրդի որոշումը հիմք են հանդիսանում գիտաշխատողների պաշտոնի բարձրացման կամ իջեցման, պաշտոնում թողնելու, պաշտոնից ազատման, պաշտոնական դրույքաչափի փոփոխման ու հավելավճարի սահմանման համար:

#### **IV. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

39. Ատեստավորման ժամանահատվածում արձակուրդի կամ գործուղման պատճառով բացակայող գիտական աշխատողների ատեստավորումը հետաձգվում է մինչև նրանց վերադարձը, ինչը հաշվի է առնվում ատեստավորման ժամանակացույցում, բացառությամբ այն դեպքի, երբ բացակայող աշխատողը գրավոր համաձայնություն է տալիս կատարել որակավորումն իր բացակայությամբ:

40. Ատեստավորվող գիտական աշխատողի կողմից սույն կարգի 2-րդ ձևին համապատասխան տեղեկատվությունը հանձնաժողովին սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում գիտական աշխատողի ատեստավորում չի իրականացվում՝ այդ մասին նշում կատարելով արձանագրության մեջ: Նման դեպքերում գիտաշխատողի հետ պայմանագիրը լուծվում է ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

41. Ատեստավորման հետ կապված վեճերը լուծվում են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:



ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՃՃՀԱՀ-ում աշխատող ատեստավորվող գիտաշխատողի գիտական գործունեության արդյունքների վերաբերյալ (2016 - 2020 թթ. համար)

Գիտաշխատողի անունը, ազգանունը-----

Գիտաշխատողի պաշտոնը-----

Գիտական աստիճանը-----

Գիտական կոչումը-----

Ցուցանիշներ	Արդյունքներ
«Web of Science» կամ «Scopus» գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված պարբերականներում հրապարակված հոդվածներ	1. Հեղինակներ (թվարկել բոլորին), “Հոդվածի վերնագիրը”, Ամսագրի վերնագիրը, Հատորը, Էջերը/Հոդվածի համարը, (տարին), Հոդվածի DOI-ն 2. ....
Տեղական և արտերկրի գրախոսվող այլ գիտական պարբերականներում հրապարակված հոդվածներ	1. Հեղինակներ (թվարկել բոլորին), “Հոդվածի վերնագիրը”, Ամսագրի վերնագիրը, Հատորը, Էջերը/Հոդվածի համարը, (տարին), առկայության դեպքում ինտերնետային հղում 2. ....
Տպագրված մենագրություններ	1. Հեղինակներ (թվարկել բոլորին), <u>Մենագրության վերնագիրը</u> , Հրատարակչությունը, Քաղաքը, Տարին, Էջերի թիվը կամ էջերը, Գրքի ISBN-ը, ինտերնետային հղումը՝ <u>եթե կա</u> 2. ....
ՃՃՀԱՀ-ում իրականացվող գիտական դրամաշնորհների, գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման թեմաների ղեկավարում	Թվարկել իրականացված ծրագրերը (թեմաները), նշելով նախագծի ծածկագիրը, անվանումը, կատարման ժամկետը, հատկացված գումարը, աշխատողի կարգավիճակը ծրագրում՝ ղեկավար կամ կատարող, համառոտ նկարագրել կատարված աշխատանքի բնույթն ու արդյունքները՝ անձնական մասնակցության առումով 1. .... 2. ....
Գիտաժողովների մասնակցություն	1. Գիտաժողովի անվանումը, անցկացման վայրն ու ժամկետը, հեղինակները (թվարկել բոլորին), “Ձեկուցման անվանումը”, Ձեկույցի ձևը (հրավիրված, բանավոր, ստենդային), Գիտաժողովի թեգիսնեռի կամ ծրագրի ինտերնետային հղումը 2. ....



		.....
6	Արտոնագրեր և հեղինակային իրավունքներ	1. Արտոնագրի / մտավոր սեփականության օբյեկտի հեղինակները, “Անվանումը”, գրանցման համարը, տարին, անհրաժեշտ այլ տեղեկություններ 2. .....
7	Ասպիրանտի կամ հայցորդի ղեկավարում	1. Նշել ասպիրանտի կամ հայցորդի Ա.Ա.Հ., թեմայի անվանումը, 2. .....
8	Պարգևներ, մրցանակներ ու կոչումներ (արտերկրի, ՀՀ պետական, գերատեսչական և ՃՇՀԱՀ կողմից տրված)	1. Ստացված միջազգային և տեղական պարգևներն ու մրցանակները, նշելով՝ ինչի համար, անհատական թե խմբային, պարգրատրվողների կազմը 2. .....
9	Գիտական աստիճան	1. Նշել մասնագիտությունը, դասիչը, գիտական աստիճանը, թեզի անվանում, պաշտպանության տարեթիվ, Վկայականի N
10	Ճարտարապետաշինարարական և ինժեներական նախագծեր (գնահատվում են II-V բարդության օբյեկտների նախագծերը)	1. Թվարկել մանրամասն 2. ....
11	Շինարարական նորմատիվային փաստաթղթեր	1. Թվարկել մանրամասն 2. .....

Ատեստավորվող գիտաշխատող՝ \_\_\_\_\_

Ազգանուն, անուն, սպորազրություն

„-----“-----2021թ.

**Ճարտարապետույան և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի  
ԳԻՏԱՇԽԱՏՈՂԻ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԹԵՐԹԻԿ**

1. Ազգանուն, անուն, հայրանուն \_\_\_\_\_
2. Գիտական աստիճանը, կոչումը \_\_\_\_\_
3. Ընդհանուր գիտական աշխատանքային ստաժը \_\_\_\_\_ տարի,
4. Տարակարգը՝ մինչև ատեստավորումը \_\_\_\_\_
5. Աշխատակցի գործունեության գնահատականը.

ա. Տարակարգով սահմանված պահանջներ— Համապատասխանում է

*ընդգծել*

Չի համապատասխանում

բ. Գործունեության արդյունավետության գնահատական — միավոր

Ցուցանիշը բավարար է

*Ընդգծել*

Ցուցանիշը բավարար չէ

Հանձնաժողովի քանակական կազմը՝ \_\_\_\_, նիստին ներկա՝ \_\_\_\_, որոշմանը կողմ՝ \_\_\_\_, դեմ՝ \_\_\_\_

Որակավորող հանձնաժողովի նախագահ՝

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (ա.ա.հ.)

Որակավորող հանձնաժողովի քարտուղար՝

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (ա.ա.հ.)

Որակավորող հանձնաժողովի անդամներ՝

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (ա.ա.հ.)

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (ա.ա.հ.)

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (ա.ա.հ.)

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (ա.ա.հ.)

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (ա.ա.հ.)

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (ա.ա.հ.)

Ատեստավորման ամսաթիվը. " \_\_\_\_\_ " \_\_\_\_\_ 20\_\_ թ.

Ատեստավորման թերթիկի հետ ծանոթացել եմ \_\_\_\_\_

(ատեստավորվող աշխատակցի ստորագրություն, ա.ա.հ., ամսաթիվ)

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի  
ատեստացիոն (որակավորող) հանձնաժողովի N \_\_\_\_\_ նիստի (“\_\_\_” \_\_\_\_\_ 20\_\_ թ.)

Ներկա էին.

Որակավորող հանձնաժողովի նախագահի, քարտուղարի և  
նիստին ներկա անդամների ա.ա.հ.

Ատեստավորման ենթակա աշխատակիցների ղեկավարների  
ա.ա.հ.

Ատեստավորվող աշխատակիցները

	Գիտաշխատողի ԱԱՀ	Պաշտոն	Գիտ.աստ.և կոչում
1			
2			
3			
4			
5			
6			

Օրակարգ. Ատեստավորման արդյունքների հիման վրա գիտաշխատողների գործունեության  
արդյունքների գնահատականների մասին

Ատեստավորման արդյունքները

1	Գիտաշխատողի ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոնը	Բավարարում է տարակարգման պահանջներին/այդ կամ ոչ/	Գործունեության արդյունավետության միավոր	Եզրակացություն				
					Համապատասխանում է տարակարգին	Չի համապատասխանում տարակարգին	Առաջարկվում է թողնել նույն տարակարգում	Առաջարկվում է տարակարգի բարձրացում	Առաջարկվում է տարակարգի իջեցում
2	3	4	5	6	7	8	9	10	
1									
2									
3									
4									

Հաշվի առնելով ատեստավորման արդյունքները, հանձնաժողովը որոշում է՝

ա) գլխավոր գիտական աշխատողի տարակարգում հաստատել հետևյալ անձանց

- 1.
- 2.
- 3.

բ) առաջատար գիտական աշխատողի տարակարգում հաստատել հետևյալ անձանց

- 1.
- 2.
- 3.

գ) ավագ գիտական աշխատողի տարակարգում հաստատել հետևյալ անձանց

- 1.
- 2.
- 3.

դ) գիտական աշխատողի տարակարգում հաստատել հետևյալ անձանց

- 1.
- 2.
- 3.

ե) կրտսեր գիտական աշխատողի տարակարգում հաստատել հետևյալ անձանց

- 1.
- 2.
- 3.

Քվեարկության արդյունքները. ԿՈՂՄ՝ \_\_\_\_\_ , ԴԵՄ՝ \_\_\_\_\_

Որակավորող հանձնաժողովի նախագահ՝

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (ա.ա.հ.)

Որակավորող հանձնաժողովի քարտուղար՝

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (ա.ա.հ.)

Որակավորող հանձնաժողովի անդամներ՝

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (ա.ա.հ.)

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (ա.ա.հ.)

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (ա.ա.հ.)

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (ա.ա.հ.)

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (ա.ա.հ.)

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (ա.ա.հ.)

Հավելված

**ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԻ ՈՐՈՇՄԱՆ  
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

**Հետազոտությունների արդյունավետություն**

1. Գիտական հոդվածներ
2. Մենագրություններ
3. Գիտաժողովների զեկույցներ
4. Արտոնագրեր
5. Շինարարական նորմատիվային փաստաթղթեր
6. Ճարտարապետաշինարարական և ինժեներական նախագծեր
7. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վերականգման նախագծեր
8. Մրցանակներ
9. Գիտական աստիճան
10. Թեկնածուական ատենախոսությունների ղեկավարում
11. Դրամաշնորհի ղեկավարում

**Գործունեության արդյունավետության ցուցանիշը գնահատվում է 5 տարի միջակայքի համար**

## 1. Գիտական հոդվածների գնահատում

Հրատարակում գիտական ամսագրում՝ հոդված («Article») կամ ակնարկ («Review»)՝ «Web of Knowledge» և «Scopus» միջազգային գիտատեղեկատվական շտեմարանների կամ Բարձրագույն որակավորման կոմիտեի (այսուհետ՝ ԲՈԿ) ցանկերում ընդգրկված, ինչպես նաև այդ ցանկերում չընդգրկված, բայց գրախոսվող ու մատենագրվող ամսագրում տպագրված հոդված: Հղում՝ տվյալ գիտական հոդվածի կամ ակնարկի վրա «Web of Knowledge» գիտատեղեկատվական շտեմարանում կամ ԲՈԿ-ի ցանկում ընդգրկված ամսագրի/պարբերականի հրատարակման մեջ պարունակվող:

$$R_1 = \sum IF \frac{(1 + c / 10)^{1/3}}{N^{1/3}}$$

Յուրաքանչյուր հոդվածի կամ ակնարկի համար՝

IF՝ ամսագրի տվյալ տարվա ազդեցության գործակիցը (այսուհետ՝ ԱԳ)՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների:

N՝ ընդհանուր համահեղինակների, համադեկավարների կամ համամրցանակակիրների թվաքանակ:

C՝ հղումների քանակ՝ առանց ինքնահղումների:

**0.20-ից ցածր IF-ի դեպքում նրան վերագրվում է՝**

**0.20՝** ԱԳ ունեցող կամ ԱԳ չունեցող, բայց «Science Citation Index Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)» կամ «Scopus» հղման համակարգերում ընդգրկված ամսագրի դեպքում,

**0.15՝** ԱԳ չունեցող, «SCIE», «SSCI», «ESCI» կամ «Scopus» հղման համակարգերում չընդգրկված, բայց ԲՈԿ-ի ցանկում ընդգրկված ամսագրի դեպքում,

**0.05՝** ԱԳ չունեցող, «SCIE», «SSCI», «ESCI» կամ «Scopus» հղման համակարգերում, ինչպես նաև ԲՈԿ-ի ցանկում չընդգրկված, բայց գրախոսվող ու մատենագրվող ամսագրի դեպքում:

## 2. Մենագրությունների գնահատում

Մենագրություն՝ գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող, որևէ մեկ գիտական թեմայի նվիրված հեղինակ(ներ)ի գիտական արդյունքներին վերաբերող (ընդգրկող), ընդհանուր հղումներից առնվազն 30% հեղինակ(ներ)ի գիտական աշխատությունների վրա հղումներ պարունակող, հետազոտողների («Researchers») համար նախատեսված, առնվազն 5 տպագրական մամուլ<sup>1</sup> ծավալ ունեցող և «ISBN» ունեցող հրապարակում:

Նյութերի կամ հոդվածների ժողովածու՝ գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող, մեկ կամ հարակից մի քանի գիտական թեմաների նվիրված և «ISBN» ունեցող հրապարակում: Նյութերի ժողովածուները ներառում են նաև մշակութային արժեքների և պատմական փաստաթղթերի գիտականորեն պատրաստված և/կամ գիտական նկարագրություն պարունակող հրապարակումները:

$$R_2 = \begin{cases} \sum B \frac{P_{sh} (1+c/10)^{1/3}}{N^{1/3}} \\ \sum CA \frac{(1+c/10)^{1/3}}{N^{1/3}} \end{cases}$$

Յուրաքանչյուր մենագրության, կոլեկտիվ մենագրության, նյութերի կամ հոդվածների ժողովածուի նյութի կամ հոդվածի համար՝

**B=0,50՝** արտերկրում օտար լեզվով հրատարակված մենագրություն կամ կոլեկտիվ մենագրություն,

**B=0,20՝** ՀՀ-ում հրատարակված մենագրություն կամ կոլեկտիվ մենագրություն (օտար լեզվով կամ հայերեն),

**B=0,15՝** արտերկրում օտար լեզվով հրատարակված նյութերի ժողովածու,

**B=0,075՝** ՀՀ-ում հրատարակված նյութերի ժողովածու (օտար լեզվով կամ հայերեն),

**B=0,05՝** մշակութային արժեքների և պատմական փաստաթղթերի գիտականորեն պատրաստված հրապարակում,

<sup>1</sup> Մեկ տպագրական մամուլը համաարժեք է A4 ֆորմատի 16 էջ տեքստի:

**B=0,02'** մշակութային արժեքների և պատմական փաստաթղթերի գիտական նկարագրություն պարունակող հրատարակում,

**CA=0,15'** արտերկրում օտար լեզվով հրատարակված հոդվածների ժողովածու,

**CA=0,075'** ՀՀ-ում հրատարակված հոդվածների ժողովածու (օտար լեզվով կամ հայերեն),

**P<sub>sh</sub>**՝ ծավալ (տպագրական մամուլ):

### 3. Գիտաժողովների զեկույցների գնահատում<sup>2</sup>

Գիտաժողովների թեզիսները («Abstract») և նյութերում չընդգրկված ստենդային զեկույցները («Poster») չեն գնահատվում:

$$R_3 = \begin{cases} \sum T \frac{1}{N^{1/3}}, \\ \sum P \frac{(1+C/10)^{1/3}}{N^{1/3}}, \end{cases}$$

Յուրաքանչյուր պլենար զեկույցի կամ գիտաժողովի նյութերում («Proceeding») հրատարակման համար՝

**T=1,00'** արտերկրում տեղի ունեցած գիտաժողովի պլենար զեկույց<sup>3</sup>,

**T=0, 50'** ՀՀ-ում տեղի ունեցած գիտաժողովի պլենար զեկույց,

**P=0,15'** արտերկրում տեղի ունեցած գիտաժողովի նյութ,

**P=0,10'** ՀՀ-ում տեղի ունեցած գիտաժողովի նյութ:

### 4. Արտոնագրերի գնահատում

$$R_4 = \sum Pt \frac{1}{N^{1/3}}$$

Յուրաքանչյուր արտոնագրի համար՝

**Pt=1,00'** արտերկրում գրանցված,

**Pt=0,10'** ՀՀ-ում գրանցված:

<sup>2</sup> Գիտաժողովների մասնակցության տարեկան քանակը չպետք է գերազանցի 12-ը:

<sup>3</sup> Պլենար զեկույցի գնահատման համար անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան ինտերնետային հղումը կամ փաստաթուղթը:



## 5. Շինարարական նորմատիվային փաստաթղթեր<sup>4</sup>

ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված շինարարական նորմեր և կանոններ:

$$R_5 = \sum Cn \frac{1}{N^{1/3}}$$

որտեղ  $Cn=1$ :

## 6. Ճարտարապետաշինարարական և ինժեներական նախագծեր<sup>5</sup>

Նախագծերը գնահատվում են համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008թ-ի փետրվարի 15-ին ընդունված N19 հրամանի Այդուսակ Ա1-ի: Գնահատվում են II-V բարդության օբյեկտների նախագծերը, որոնք համաձայնեցվել են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից:

$$R_6 = \sum Pl \frac{1}{N^{1/3}}$$

Յուրաքանչյուր նախագծի համար՝

$Pl=0.4$ ՝ երկրորդ կարգի բարդության նախագիծ

$Pl=0.6$ ՝ երրորդ կարգի բարդության նախագիծ

$Pl=0.8$ ՝ չորրորդ կարգի բարդության նախագիծ

$Pl=1$ ՝ հինգերորդ կարգի բարդության նախագիծ

## 7. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վերականգնման նախագծերի գնահատում<sup>6</sup>

Գնահատվում են այն պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վերականգնման նախագծերը, որոնք համաձայնեցվել են լիազոր մարմնի կողմից:

<sup>4</sup> Հաշվի են առնվում, եթե հեղինակը վերջին 5 տարում ունի ՀՀ ԲՈԿ-ի ցանկում ընդգրկված պարբերականներում առնվազն 3 տպագրված հոդված:

<sup>5</sup> Հաշվի են առնվում, եթե հեղինակը վերջին 5 տարում ունի ՀՀ ԲՈԿ-ի ցանկում ընդգրկված պարբերականներում առնվազն 3 տպագրված հոդված:

<sup>6</sup> Հաշվի են առնվում, եթե հեղինակը վերջին 5 տարում ունի ՀՀ ԲՈԿ-ի ցանկում ընդգրկված պարբերականներում առնվազն 3 տպագրված հոդված:

$$R_7 = \sum Hr \frac{1}{N^{1/3}}$$

Յուրաքանչյուր նախագծի համար՝

**Hr=1**՝ մինչև 30% պահպանվածության դեպքում

**Hr=0.8**՝ մինչև 50% պահպանվածության դեպքում

**Hr=0.6**՝ մինչև 80% պահպանվածության դեպքում

### 8. Մրցանակների գնահատում

Մրցանակ՝ ճանաչված միջազգային **գիտական** մրցանակ, ՀՀ Նախագահի, ՀՀ կամ օտարերկրյա որևէ պետության **պետական** մրցանակ:

$$R_8 = \sum Pr \frac{1}{N^{1/3}}$$

Յուրաքանչյուր մրցանակի համար՝

**Pr=10,00**՝ ճանաչված միջազգային գիտական մրցանակ,

**Pr=5,00**՝ ՀՀ Նախագահի, ՀՀ կամ օտարերկրյա որևէ պետության պետական մրցանակ:

### 9. Գիտական աստիճանի գնահատում

Հաշվի է առնվում մեկ՝ առավելագույն ենթաբաղադրիչը:

$$R_9 = Max(AD)$$

**AD=0**՝ չունի գիտական աստիճան,

**AD=2,00**՝ գիտությունների թեկնածու,

**AD=2,50**՝ գիտությունների դոկտոր:

### 10. Թեկնածուական ատենախոսությունների ղեկավարում<sup>7</sup>:

$$R_{10} = \sum PhD$$

Ղեկավարությամբ պաշտպանված յուրաքանչյուր ատենախոսության համար՝

<sup>7</sup> Հաշվի է առնվում տարեկան առավելագույնը երկու թեկնածուական ատենախոսության պաշտպանություն:

PhD=1,00՝ ղեկավար:

**11. Գիտական դրամաշնորհների, գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման թեմաների ղեկավարման գնահատում**

Գիտական դրամաշնորհ<sup>8</sup> կամ թեմա՝ մեկ և ավելի տարի տևողությամբ **հետազոտական** ծրագիր:

$$R_{11} = \sum Gr$$

Յուրաքանչյուր դրամաշնորհի կամ թեմայի համար՝

**Gr=0՝** մինչև 5,0 հազար USD կամ դրան համարժեք ընդհանուր ֆինանսական ծավալի դրամաշնորհ,

**Gr=1,00՝** 5,0-10,0 հազար USD կամ դրան համարժեք ընդհանուր ֆինանսական ծավալի դրամաշնորհ,

**Gr=1,10՝** 10,0-50,0 հազար USD կամ դրան համարժեք ընդհանուր ֆինանսական ծավալի դրամաշնորհ: 50,0 հազար USD կամ դրան համարժեք ընդհանուր ֆինանսական ծավալը գերազանցելու դեպքում՝ յուրաքանչյուր 50,0 հազար USD կամ դրան համարժեք ֆինանսական ծավալի համար՝ 0,1 միավոր:

**Ընդհանուր միավորը կորոշվի հետևյալ բանաձևով**

$$R = \sum_{i=1}^{11} R_i$$

**Գիտական քարտուղար**  
**տ.գ.թ., դոցենտ՝**



**L.Տ. Լևոնյան**

19 հոկտեմբերի 2021թ

Արձանագրություն No.01-10/21

<sup>8</sup> Գիտական դրամաշնորհի ֆինանսական բաղադրիչի գնահատման համար անհարժեշտ է ներկայացնել միայն հայաստանյան կազմակերպության կամ գիտահետազոտական խմբին հատկացված ֆինանսական ծավալի չափը՝ համապատասխան ինտերնետային հղումով կամ փաստաթղթով: